թեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և յիշատակ կուտայ իր ձեռագիր մագաղաթեայ Աւետարանը որ այժմ կը մնայ Ս. Յակոբի վանքին մատենադարանին մէջ. նոյն ձեռագիրին յիշատակարանէն կը քաղենք հետևեալը. «... վասն այն յուսոյն ետ գրել զսբ. աւետարանս, և զարդարել ետ ոսկւով և երանգ երանգ ծաղկով յիշատակ իւրն և իր ծնողացն և ամ. արեանառու մերձաւորացն կենդանեաց և հանգուցելոցն, նաև սուրբ հօրն իւրոյ հոգեւորի Կարապետ գիտնական ռաբունապետի որ հանգուցեալ է առ Քս., եւ եղեալ կայ յեմ. քաղաքս ի Ս. Փրկչի եկեղեցին։ Դարձեալ կրկին աղաչեմ յիշել ի տէր ես Սիմոնն վարդապետս Ապարանցի որ ստացայ զսա մեծ կարաւտիւ, և առեալ զսբ. աւետարանս և եկի ի սբ. քաղաքս յեմ. և եղի յիշատակ ի դուռն Ս. Յակոբայ. ի թվին հայոց ՌԴԲ (= 1643). ի հայր. սուրբ տեղեացս Եմ. տեառն տէր Գրիգոր արի և քաջ հայրապետին...» (Խապ. Ցուց., և ՄՁ. Թ. 532)։ Սոյն Սիմէոն վրդ. Ապարանցին եղբօրորդին է մեծ Սիմէոն վրդ. Ապարանցիին՝ որ ուսուցիչն էր Կարապետ վրդ. Մոկացիին։ Վախճանած է Վանի մէջ։ Հաւանաբար իր յիշատակն է նաև Աստուածաշունչ մը որուն յիշատակարանին մէջ կոչուած է Սիմեոն վրդ. Մոկացի (Խապ. Ցուց. տետր. ԺԳ. էջ 1010)։ Սիմէոն վրդ. Ապարանցին Շարակնոց մըն ալ նուիրած է Ս. Յակոբի վանքին. «... որ (Սիմէոն վրդ.) առաքեաց զշարակնոցս ի սուրբ Երուսաղէմ ընդ Մոկացի տէր Դաւթին յիշատակն ի դուռն Ս. Յակոբայ։ որ վերոգրեալ քհյն. անյապաղ բերեալ հասոյց ի թվին ՌՃԼԷ (= 1688) յեմ. և եդ յիշատակ յաւիտենական»։

ՍԻՄԷՈՆ ՎՐԴ. ԹԵԼԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ. — Մբ. Ծ. 1870ին. Զռ. 1898ին. ՏՑ. (1901—1904). ՏՑՊ. 1905ին. թարգման 1907ին. ՏՀ. 1908ին. բ. անգամ ՏՑՊ. (1910—1915). տեսուչ կալուածոց (1920—1928), անդամ ՏՆ. Ժողովի (1921—1928). վախճանած է 7 Յուլիս 1928 և թաղուած Սիոնի գերեզմանատունը։

ՍԻՄԷՈՆ ՎՐԴ. ԹՕԳԱՏՑԻ.— Մբ. 1771ին։

ՍԻՄԷՈՆ ՎՐԴ. ՆԻԶԱՄԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.— Մբ. 1847ին։

ՍԻՄԷՈՆ ՎՐԴ.— Մբ. Նւ. Սեբաստիոյ 1793ին։

ՍԻՄԷՈՆ ՎՐԴ. ՍԱՍՈՒՆՑԻ.— Մբ. Մշոյ (Շուշտակ). Ադրիանուպոլսեցի Պօղոս պարք·ի օրով ուխտաւորութեամբ կ'այ-